



ԼՂՀ ԿԱ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

2012 թվականի գործունեության տարեկան
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության 2012 թվականի գործունեության տարեկան հաշվետվություն

2012 թվականին ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կողմից իրականացված աշխատանքների հիմնական նպատակը եղել է ԼՂՀ կառավարության 2012 թվականի գործունեության միջացառումների ծրագրի և ԼՂՀ կառավարության ռազմավարական ծրագրերով նախատեսված ընդերքօգտագործման և բնապահպանության ոլորտների գծով գերակա խնդիրների կատարման ապահովումը:

1. Ընդերքօգտագործում

Հաշվետու ժամանակաշրջանում լիազոր մարմնի կողմից ուսումնասիրվել են ներկայացված հանքարդյունահանման և երկրաբանական ուսումնասիրության լիցենզիա ստանալու 22 հայտ, որի արդյունքում տրամադրվել է 21 ընդերքօգտագործման լիցենզիա, որից`

- 12 հանքարդյունահանման,
- 9 երկրաբանական ուսումնասիրության,

Դադարեցվել են 30 ընդերքօգտագործման լիցենզիա, որից`

- 11 հանքարդյունահանման,
- 19 երկրաբանական ուսումնասիրության:

2012թ. ԼՂՀ պետական բյուջե է մուտքագրվել 21,0 մլն դրամ պետական տուրք և կոնցեսիոն վճար:

ԼՂՀ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ուղղությամբ 2012թ. ընթացքում <<Արցախի երկրաբանական էքսպեդիցիա>> ՊՈԱԿ-ի կողմից աշխատանքներ են տարվել ԼՂՀ Շահումյանի, Մարտունու, Հաղրուփի, Քաշաթաղի շրջաններում ազնիվ և գունավոր մետաղների որոնման, հայտնի հանքերակումների որոնողա-գնահատման ու վերստուգիչ աշխատանքների իրականացման, և երկրաբանական ֆոնդի տվյալների սկանավորման ու թվայնացման ուղղություններով:

Մետաղային օգտակար հանածոների հանքերակումների երկրաբանական ուսումնասիրություններին զուգընթաց <<Արցախի երկրաբանական էքսպեդիցիա>> ՊՈԱԿ-ի երկրաբանների դաշտային երթերի ժամանակ արձանագրվել են նաև ոչ մետաղային օգտակար հանածոների, այդ թվում` վարդագույն տուֆի տարածման մի շարք տեղամասեր:

Մետաղական օգտակար հանածոների բնագավառում հաշվառման մեխանիզմների կատարելագործման նպատակով մշակվել է <<Բնապահպանական և

բնօգտագործման վճարների մասին»» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը, «Ընդերքն ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրելու (կոնցեսիայի) մասին»» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը, որոնք ուղղված են մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար ռոյալթիի՝ որպես բնօգտագործման վճարի սահմանմանը:

Մշակվել և ԼՂՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Ռոյալթիների հաշվարկման համար իրացումից հասույթի հաշվարկման կարգը հաստատելու մասին»» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով սահմանվում է ռոյալթի վճարողների կողմից՝ հանքարդյունաբերության արտադրանքի՝ մետաղի խտանյութի իրացումից հասույթի հաշվարկման կարգը, ինչպես նաև մշակվել է Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի նախագիծը: Նախագծի կարգավորման առարկան է ընդերքօգտագործման ոլորտում տեղ գտած և ոլորտի զարգացմանը խոչընդոտող թերությունների վերացումը:

2. Անտառկառավարում

Անտառների պահպանությանը, պաշտպանությանը, վերարտադրմանը և անտառօգտագործմանը ուղղված մի շարք միջոցառումներ են իրականացվել, մասնավորապես բնական աճի աջակցման, բնական աճի ուսումնասիրության, անտառային ճանապարհների կառուցապատման ու վերանորոգման և բնափայտի մթերման տարեկան չափաքանակի ապահովման ուղղությամբ:

Բնափայտի բնական աճի աջակցմանն ուղղված ծրագրով իրականացվել է 130 հա տարածքի փխրեցում, որից՝

- 100 հա Հաղրուծի անտառտնտեսությունում,
- 30 հա Մարտակերտի անտառտնտեսությունում:

Բնական աճի ուսումնասիրությանն ուղղված միջոցառումները հիմնականում իրականացվել են Քաշաթաղի մասնաճյուղում, իսկ Շահումյանի, Մարտակերտի և Հաղրուծի մասնաճյուղերում այն իրականացվել են մասամբ:

Անտառային ճանապարհների կառուցապատման և վերանորոգման ծրագիրը կատարվել է 100 %-ով: Պլանավորված 5,3 կմ վերանորոգման և 5,5 կմ

կառուցապատման աշխատանքները պայմանագրային ժամկետներում կատարվել են հաստատված նորմերին համապատասխան:

ԼՂՀ կառավարության որոշմամբ 2012թ. համար հաստատված 7500 մ³ գործափայտի և 60000 մ³ վառելափայտի մթերման համար անտառօգտագործողներին թույլտվություններ տրամադրելու նպատակով քննարկվել են իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացված բոլոր դիմում-գրությունները, որոնց համաձայն ներկայացվել են համապատասխան առաջարկություններ՝ բնափայտի մթերման և իրացման գործառույթներում <<Արցախանտառ>> ՊՈԱԿ-ին ամրագրված գործառույթները կանոնակարգելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում մթերվել է՝

- 7156 խմ գործափայտ
- 108000 խմ վառելափայտ:

3. Բնապահպանական փորձաքննություն

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացնելու նպատակով տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված դիմումները քննարկելուց և ներկայացված փաստաթղթերի լիարժեքությունը ստուգելուց հետո կնքվել են պայմանագրեր, և օրենքով սահմանված կարգով իրականացվել են համապատասխան փորձաքննություններ:

Ընդերքի երկրաբանական ուսումնասիրություններ և օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման նպատակ հետապնդող իրավաբանական անձանց դիմումների համաձայն նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից տեղում կատարվել են 15 ուսումնասիրություններ:

2012 թվականին օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման նպատակով, իրավաբանական անձանց դիմումների համաձայն, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից տեղում կատարված ուսումնասիրությունների հիման վրա տրամադրված համաձայնությունների քանակը 2011 թվականի համեմատ ավելացել է 9-ով:

3.1. Ծառահատումների թույլտվություններ

Ստեփանակերտի քաղաքապետարանի, ԼՂՀ շրջվարչակազմերի, գյուղական համայնքների, տարբեր կազմակերպությունների ու քաղաքացիների կողմից ծառահատում և ծառերի երիտասարդացում իրականացնելու նպատակներով ներկայացված 67 դիմումների հիման վրա տեղում կատարվել են դրանց կենսական վիճակների ուսումնասիրություններ և համապատասխան քննարկումների

արդյունքում տրամադրվել՝ 59 թույլտվություն: 8 դիմում մերժվել է, ծառահատումների պայմանները իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանելու պատճառով:

2012 թվականին ծառահատման և ծառերի երիտասարդացման թույլտվությունների քանակը 2011 թվականի համեմատ ավելացել է 29-ով, իսկ մերժումների քանակը ավելացել է 7-ով:

3.2. Որսի թույլտվություններ

Որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների որսաշրջանում՝ որսորդներին և ձկնորսներին, համապատասխան փաստաթղթերի արժանահավատությունը ստուգելուց և ընդունելուց հետո, տրամադրվել են 8 թույլտվություններ, այդ թվում՝ 6-ը վայրի խոզերի (վարազների) որսի, իսկ 2-ը՝ ցանցով և թառփով ձկնորսություն իրականացնելու համար:

Տրամադրված թույլտվությունների դիմաց պետբյուջե է մուտքագրվել 332,0 հազ. դրամ:

Այս ոլորտի աշխատանքները կատարվել են տարվա որսաշրջանի ընթացքում և վերահսկվել են:

2012 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2011 թ. ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում.

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	2012 թվական		2011 թվական	
		Քանակը	Գումարը (հազ. դրամ)	Քանակը	Գումարը (հազ. դրամ)
1	Կենդանատեսակների որսի թույլտվություններ	6 հատ	300.0	25 հատ	33,5
2	Ցանցով ձկնորսություն իրականացնելու թույլտվություններ	366 կգ	11.0	1700 կգ	51,0
3	Թառփով ձկնորսություն իրականացնելու թույլտվություններ	700 կգ	21,0	1200 կգ	36,0
Ընդամենը՝ մուտքագրվել է պետբյուջե		x	332,0	x	120.5

2012 թվականին որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների օգտագործման նպատակով սիրողական և արդյունագործական որսի համար տրամադրված թույլտվությունների դիմաց մուտքագրումները պետբյուջե ավելացել են 211,5 հազ. դրամով:

3.3. Ջրային ռեսուրսներ

Տնտեսավարող սուբյեկտների կողմից ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով ներկայացված հայտերի հիման վրա, ԼՂՀ Ջրային օրենսգրքի պահանջներին ջրօգտագործման պայմանների համապատասխանության ստուգման

նպատակով, տեղում ուսումնասիրվել է 31 ջրառի օբյեկտ և համապատասխան քննարկման արդյունքում տրամադրվել ջրօգտագործման թույլտվություններ: Տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների դիմաց ԼՂՀ պետբյուջե է մուտքագրվել 340,0 հազ. դրամ:

2012 թվականին ջրօգտագործման թույլտվությունների քանակը 2011 թվականի համեմատ նվազել է 3-ով, երկարաձգումների քանակը՝ նվազել է 2-ով, մուտքերը պետբյուջե 2011 թ. համեմատ նվազել են 30.0 հազ դրամով:

3.4. Հողերի կառավարում

ԼՂՀ շրջանների վարչակազմերի և համայնքների ղեկավարների դիմումների համաձայն, հողերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու նպատակով նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ, իսկ բնապահպանական փորձաքննություն իրականացնելուց հետո տրամադրվել են գրավոր համաձայնություններ՝ դրանց փոփոխման վերաբերյալ: ԼՂՀ կառավարության 2005թ. փետրվարի 28-ի «Հողերի նպատակային նշանակության (կատեգորիայի) փոփոխման կարգը սահմանելու մասին» N85 որոշման պահանջներին չհամապատասխանող դիմումները մերժվել են:

4. Գիշատիչների գլխաքանակը կարգավորող միջոցառումներ

ԼՂՀ կառավարության 2012թ. փետրվարի 8-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N58-Ս որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն՝ կազմակերպվել և իրականացվել է տարբեր վարչական տարածքներում գիշատիչների (գայլերի, շնագայլերի) գլխաքանակի կարգավորման միջոցառումներ:

2012 թվականին ոչնչացվել է 134 գլուխ գայլ և 266 գլուխ շնագայլ, այդ թվում.

Շրջաններ	գայլ	շնագայլ
ք.Ստեփանակերտ	-	90
Ասկերանի շրջան	26	10
Մարտակերտի շրջան	46	45
Մարտունու շրջան	13	50
Հադրութի շրջան	16	50
Շուշիի շրջան	2	12
Քաշաթաղի շրջան	18	9

Գիշատիչների գլխաքանակի կարգավորման կենսատեխնիկական միջոցառումների կազմակերպման և որսորդների խրախուսման համար պետական բյուջեից նախատեսվել է 18000,0 հազար դրամ:

2012 թվականին ոչնչացված գայլերի և շնագայլերի դիմաց որսորդներին վճարվել է 15328,0 հազար դրամ (այդ թվում՝ գայլերի համար 13200,0 հազար դրամ և 2128,0 հազար դրամ՝ շնագայլերի համար):

5.Տեսչական վերահսկողական աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում հանրապետության տարածքում բնապահպանական պետական տեսչության կողմից կատարվել են 39 ստուգայցեր՝ ըստ «Բնապահպանական վերահսկողության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ և 27-րդ հոդվածների պահանջների:

Բնապահպանական պետական տեսչության կողմից ստուգայցերի ընթացքում հայտնաբերվել և օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացքավորվել են 74 տարբեր տեսակի իրավախախտումներ, որոնց հաշվարկված վնասի չափը կազմել է 55460.750 հազ. Դրամ, իսկ վարչական տուգանքը՝ 750.0 հազ. դրամ:

Կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության ոլորտում՝

• Ապօրինի ծառահատման փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 32 իրավախախտում, որոնք կատարվել են 30 քաղաքացիների կողմից:

1. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 65-րդ և 66-րդ հոդվածներով վարչական պատասխանատվության է ենթարկվել 7 քաղաքացի՝ 400.0 հազ. դրամի չափով.

2. Կազմված 32 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 55205.750 հազ. դրամ.

3. Ոստիկանություն է ուղարկվել 16 վարույթ՝ 52949.0 հազ. դրամի չափով.

4. Դատարան է ուղարկվել 1 գործ՝ 200.0 հազ. դրամի չափով, որից 50.0 հազ. դրամը վարչական տուգանք է:

• Ապօրինի որսորդության փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 6 իրավախախտում, որոնք կատարվել է 14 քաղաքացիների կողմից:

1. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 88-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 6 քաղաքացի՝ 290.0 հազ. դրամի չափով, որից կամավոր մուծվել է պետբյուջե 200.0 հազ. դրամ:

2. Կազմված 6 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 205.0 հազ. դրամ,

• Ապօրինի ձկնորսության փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 1 իրավախախտում, որը կատարվել է 1 քաղաքացու կողմից:

1. Կազմված 1 արձանագրությունով հաշվարկված վնասի չափը կազմել է 50.0 հազ. դրամ, որը կամավոր մուծվել է պետբյուջե:

Բնապահպանական պետական փորձաքննության, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության ոլորտներում՝

Ջրօգտագործման թույլտվության ճշտության փաստի առթիվ ստուգվել է 19 կազմակերպություն:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների ոլորտում՝

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ հաշվետվությունն են ներկայացրել 67 հիմնարկ-ձեռնարկություն:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունների ճշտության նպատակով 2012թ. ստուգվել են ԼՂՀ-ում գործող 12 հիմնարկ ձեռնարկություններ, որից՝ 1 կազմակերպության նկատմամբ կազմվել է օրենսդրության խախտման արձանագրություն:

ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 169⁴-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 2 կազմակերպություն 60.0 հազ. դրամի չափով:

2012թ. ստուգայցերի քանակը 2011թ. համեմատ նվազել է 30-ով,

2012թ. իրավախախտումների քանակը 2011թ. համեմատ նվազել է 23-ով,

2012թ. վնասի չափը 2011թ. համեմատ ավելացել է 25071.75 հազ. դրամով,

2012թ. վարչական տուգանքը 2011թ. համեմատ ավելացել է 110.0 հազ. դրամով:

6. Վարչատնտեսական գործունեություն և գործառնություն

2012 թվականին ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պահպանման ծախսերը կազմել են 57.4 մլն. դրամ՝ պլանավորված 62.3 մլն. դրամի դիմաց: Հաստիքների թվաքանակը կազմել է 36 հաստիք:

2012 թ. ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմ է մուտքագրել է 802 գրություն, որից 312-ը - իրավաբանական անձանց գրություններ և քաղաքացիների դիմումներ, 490 - պետական մարմիններից և նրանց ենթակա կազմակերպություններից ստացած գրություններ: Պատասխանվել և ուղարկվել է 725 ելից գրություն: